ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

28.12.2018թ.

ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/178

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.11.2018թ. թիվ 27/26-3/21750-18 գրությամբ «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 19.11.2018թ. թիվ 01/61-24173 գրության հիման վրա 28.11.2018թ. «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր;

2. **<u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը 19.11.2018թ. թիվ 01/61-24173 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) միջև 28.11.2018թ. կնքված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/1-8 ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրով (այսուհետ՝ նաև պայմանագիր) Ընկերությունը ստանձնել է պայմանագրով սահմանված հացի մատակարարման պարտավորությունը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ նաև պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի թիվ 1.1 և 1.2 հավելվածներով՝ Տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ նաև ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 2.4.2 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետին և (կամ) 2.1.5 կետի համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

Պայմանագրի 2.4.5 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պատշաճ ձևով չի կատարել պայմանագրային պարտավորությունները, այն է՝ հաճախակի խախտել է պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը, ինչպես նաև մատակարարված հացը շատ դեպքերում չի համապատասխանել տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին, որի մասին ընկերությանը բազմիցս զգուշացվել է էլ. փոստի միջոցով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտաավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը պարտավոր է մեկ այլ անձի օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտավորությունը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը լրիվ կամ մասնակի, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտել է 2 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից փաստացի չի կատարվել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվում է կնքված ապրանքի մատակարարման գնման պայմանագրից 130-րդ չափաբաժնի մասով՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, առաջարկում եմ Ընկերության նկատմամբ կիրառել նույն օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթները:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ Գոռ Մուրադյանը:

3. <u>«Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն 24.12.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի միջև 2017թ. դեկտեմբերի 28-ին կնքվել է հացի մատակարարման ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/1-8 ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն պայամանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.8 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

Պայմանագրի համաձայն՝ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվեր երկու վարչական շրջանների մի շարք մանկապարտեզներ՝ Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններ:

Վերոնշված պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 19.11.2018թ. միակողմանի լուծվել է, մասնավորապես երկու հիմքով՝

1.Ընկերությունը պատշաճ ձևով չի կատարել պայմանագրային պարտավորությունները, այն է՝ հաճախակի խախտել է պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը,

2. Ընկերության կողմից մատակարարված հացը շատ դեպքերում չի համապատասխանել տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հայտնում ենք, որ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/1-8 ծածկագրով պայմանագրի մատակարարումները պետք է իրականացվեր Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների մանկապարտեզներում:

«Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն պայմանագրի կատարման փուլում բոլոր մատակարարումները իրականացրել է պայմանագրով սահմանված ժամկետներում և պայմանագրով սահմանված տեխնիկական-բնութագրին համապատասխան որակի:

Սույն թվականի նոյեմբերի 7-ին առաջացած տեխնիկական խնդիրների պատճառով «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն չի իրականացրել հացաթխման աշխատանքներ, որի մասին տեղյակ է պահել նաև Պատվիրատուներին:

Այնուհետև, նոյեմբերի 8-ին ստացել ենք նախնական պատվերներ թե՛ Աջափնյակ վարչական շրջանի և թե՛ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կողմից: «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն սահմանված ժամկետում կատարել է թթխմորի հունցի աշխատանքները՝ առավոտյան հացը մատակարարելու նպատակով, սակայն Աջափնյակ վարչական շրջանի կողմից ստացել ենք զանգ՝ մատակարարումը չիրականացնելու վերաբերյալ, ավելին հայտնել, որ այլևս «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ից հաց չեն գնելու, իսկ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների մանկապարտեզների մատակարարումը նույն օրը իրականացվել է սահմանված կարգով և ժամկետներում:

Առավոտյան զանգահարել ենք Աջափնյակ վարչական շրջան և հայտնել, որ մատակարարման նպատակով թթխմորված արտադրանքը արդեն պատրաստ է և եթե չմատակարարվի, ապա ստիպված կդառնա օգտագործման ոչ պիտանի խմոր:

Սույն թվականի նոյեմբերի 9-ի երեկոյան Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների կողմից նորից ստացել ենք նախնական պատվերներ, իսկ Աջափնյակ վարչական շրջանի կողմից նորից ստացել պատասխան, որ մատակարարում անհրաժեշտ չէ:

Նոյեմբերի 10-ին «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի ղեկավարությունը հանդիպում է ունեցել Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի հետ, ում ներկայացվել է Աջափնյակ վարչական շրջանի կողմից 2 անգամ մատակարարումից հրաժարվելու մասին, որի հետևանքով Ընկերությունը կրել է ֆինանսնական վնասներ:

Ի պատասխան մեր կողմից բարձրացված խնդրի՝ Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարը հանձանարարեց պատկան մարմիններին՝ շարունակելու մատակարարման նպատակով նախնական պատվերներ իրականացնել «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ից:

Այնուհետև սույն թվականի նոյեմբերի 12-ին «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին կատարվեց նախնական պատվեր՝ Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների մանկապարտեզներին հաց մատակարարելու վերաբերյալ:

Նոյեմբերի 12-ին Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների կողմից կատարված նոյեմբերի 13-ի մատակարարման համար նախնական պատվերների կատարման փուլում՝ Աջափնյակ վարչական շրջանի կողմից արձանագրվել է, թե իբր մատակարարված հացը չի համապատասխանել տեխնիկական-բնութագրի պահանջներին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ համաձայն Պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետի՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի: Այս պարագայում Երևանի քաղաքապետարանի կողմից նոյեմբերի 7, 8, և 9 մատակարարումները չիրականացնելու արդյունքում արդեն իսկ պետք է լուծվեր պայմանագիրը 2.1.7.1 կետի «բ» ենթակետի հիմքով (չնայած ինչպես նշվել է, մատակարարումները չեն իրականացվել հենց տվյալ վարչական շրջանի մանկապարտեզների պահանջով), արդյունքում չլուծելով այդ հիմքով՝ Երևանի քաղաքապետարանը, փաստորեն, չի արձանագրել Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի խախտումը և շարունակել է պահանջել մատակարարումները:

Տեղեկացնում ենք, որ «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն դիմել է հեռախոսային կապի իր օպերատորին, որպեսզի օպերատորը տրամադրի նոյեմբեր ամսվա զանգերի

քաղվածքը՝ ներկայանելու համար Աջափնյակ վարչական շրջանի մանկապարտեզների հացի մատակարարումներից հրաժարված անձի ինքնությունը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

Հայտնում ենք, որ նախ, անհիմն է Պատվիրատուի կողմից մատակարարված ապրանքի անպատշաճ որակի լինելու փաստի արձանագրումը, քանզի անհասկանալի է, թե ինչ եղանակներով և ինչ փորձագիտական կենտրոնում է կատարվել հետազոտությունը, կասկածելի է նաև այն հանգամանքը, թե որ ընկերության կողմից արտադրված հացն է տարվել հետազոտության և որ, ամենակարևորն է, ինչու չի զգուշացվել «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին, որպեսզի վերջինս հետազոտության (փորձաքննության) ընթացքում ապահովեր իր ներկայացուցչի մասնակցությունը, ինչպես դա պահանջվում է ցանկացած փորձաքննության իրականացման համար սահմանված կարգը:

Բացի այդ, արձանագրելով, որ նոյեմբերի 13-ի մատակարարված հացի եղել է անպատշաճ որակի՝ Պատվիրատուն խախտելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետի պահանջները՝ չի տվել Ընկերությանը այդ ապրանքը սահմանված ժամկետում փոխարինելու հնարավորություն:

Ամփոփելով Երևանի քաղաքապետարանի կողմից «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին հացի մատակարարումները ուշացնելու մասով մեղանդրանքներին՝ հայտնում ենք, որ ամբողջ 2018թ. կատարվել է Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների մանկապարտեզների հացի մատակարարումները և անտրամաբանական է, որ պայմանագրի ավարտից մոտ 30 օր առաջ «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն որոշեր իրեն դրսևորել որպես անպատասխանատու ընկերություն և մատակարարումներն իրականացներ ժամկետների խախտումներով:

Ինչ վերաբերվում է նոյեմբերի 13-ի մատակարարման արդյունքում արձանագրված անհամապատասխանությանը, ապա անհասկանալի է՝ Պատվիրատուի գործողությունները առանց «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի ներկայացուցչի հացը հետազոտության իրականացնելու մասով, ավելին, գտնում ենք, որ Պատվիրատուն պետք է առաջնորդվեր Պայմանագրի 2.1.7.1 կետի ա ենթակետի պահանջներով և Ընկերությանը տար ընդունելի

ժամկետում ապրանքը փոխարինելու հնարավորություն, ինչը տվյալ դեպքում չի իրականացվել:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. ՍՑ-ԷՍ-2018/178 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 28.11.2018թ. թիվ 27/26-3/21750-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 19.11.2018թ. թիվ 01/61-24173 գրությունը և կից փաստաթղթերը, «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի կողմից 24.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, Երևանի քաղաքապետարանի և «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի միջև 28.11.2018թ. կնքված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/1-8 ծածկագրով գնման պայմանագիրը, Երևան քաղաքապետարանի կողմից 19.11.2018թ. «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին ուղղված թիվ 61/1196 գրությունը, Աջափնյակ վարչական շրջանի կողմից 07.11.2018թ., 09.11.2018թ. և 13.11.2018թ. էլ. փոստի միջոցով «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին ուղղված ծանուցումները:

Երևանի քաղաքապետարանի և «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի միջև 28.11.2018թ. կնքվել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/1-8 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ նաև պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի թիվ 1.1 և 1.2 հավելվածներով՝ Տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ նաև ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

- 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից եթե մատակարարման ժամկետը խախտվել է 1 օրից ավելի:
- 2.1.2 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա. պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ. չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

- 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
- 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտել է 2 օրից ավելի:

- 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:
- 2.4.2 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետին և (կամ) 2.1.5 կետի համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
- 2.4.5 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

- 8.9 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնման պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվել է գնման ենթակա առարկայի հետևյալ բնութագիրը.

- անվանումը՝ հաց,

- տեխնիկական բնութագիրը՝ «Մատնաքաշ» կամ «Հրազդան», ցորենի բարձր տեսակի ալյուրից պատրաստված ՀՍՏ 31-99, փաթեթավորումը՝ թղթե տոպրակով կամ սննդի համար նախատեսված պոլիէթիլենային թաղանթով՝ համապատասխան մակնշումով, անվտանգությունը՝ ըստ N2-III-4, 9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90%,

- չափման միավորը՝ կիլոգրամ,

- ընդհանուր գինը՝ 25.278.400 ՀՀ դրամ,

- ընդհանուր քանակը՝ 97.600

- մատակարարման ժամը/ժամկետը՝ 8:15, Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո մինչև 2018թ. Դեկտեմբեր ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ:

Երևանի քաղաքապետարանը 19.11.2018թ. թիվ 61/1196 գրությամբ «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) միջև 28.11.2018թ. կնքված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/1-8 ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրով (այսուհետ՝ նաև պայմանագիր) Ընկերությունը ստանձնել է պայմանագրով սահմանված հացի մատակարարման պարտավերությունը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագով (այսուհետ՝ նաև պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի թիվ 1.1 և 1.2 հավելվածներով՝ Տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ նաև ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 2.4.2 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետին և (կամ) 2.1.5 կետի համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

Պայմանագրի 2.4.5 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պատշաճ ձևով չի կատարել պայմանագրային պարտավորությունները, այն է՝ հաճախակի խախտել է պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը, ինչպես նաև մատակարարված հացը շատ դեպքերում չի համապատասխանել տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին, որի մասին ընկերությանը բազմիցս զգուշացվել է էլ. փոստի միջոցով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտաավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը պարտավոր է մեկ այլ անձի օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտավորությունը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը լրիվ կամ մասնակի, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ)ապրանքի մատակարարման ժամկետները խախտել է 2 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից փաստացի չի կատարվել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվում է կնքված ապրանքի մատակարարման գնման պայմանագրից 130-րդ չափաբաժնի մասով՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ առաջարկում եմ Պայմանագրի 6.3 կետով հաշվարկված տույժերի և Պայմանագրի կատարման ապահովման գումարը վճարել ՀՀ կենտրոնական գանձապետարանի 900015211429 հաշվեհամարին:»:

«Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն Աջափնյակ վարչական շրջանի մանկապարտեզների կողմից 07.11.2018թ., 09.11.2018թ. և 13.11.2018թ. էլ. փոստի միջոցով ստացել է ծանուցումներ առ այն, որ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/1-8 ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրով նախատեսված ապրանքը չի մատակարարավել կամ մատակարարվել է ժամկետի խախտմամբ, իսկ մատակարարված ապրանքը եղել է ոչ պատշաճ որակի, չի համապատասխանել տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին, ինպես նաև պահպանված չեն եղել սանիտարահիգիենիկ նորմերը,

մասնավորապես՝ բացակայում էին առաքիչի սանիտարական գրքույկը և մատակարարող մեքենայի սանիտարական անձնագիրը:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/1-8 ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագիրը միակողմանի լուծվել է այն հիմքով, որ հաճախակի խախտվել է պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը և մատակարարված հացը շատ դեպքերում չի համապատասխանել տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ 07.11.2018թ. առաջացած տեխնիկական խնդիրների պատճառով հացաթխման աշխատանքներ չեն իրականացվել, որի մասին հեռախոսազանգի միջոցով պատվիրատուները տեղյակ են եղել: Այնուհետև 08.11.2018 Ընկերությունը ստացել է նախնական պատվերներ Աջափնյակ վարչական շրջանի և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կողմից, որից հետո կատարվել են թթխմորի հունցի աշխատանքները հաջորդ առավոտյան հացը մատակարարելու նպատակով, սակայն Աջափնյակ վարչական շրջանի կողմից ստացվել է զանգ՝ մատակարարումը չիրականացնելու վերաբերյալ, ինչպես նաև հայտնել են, որ այլևս «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ից հաց չի գնվելու: 12.11.2018թ. «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին կատարվել է նախնական պատվերներ՝ Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների մանկապարտեզներին հաց մատակարարելու վերաբերյալ, այնուհետև 13.11.2018թ. մատակարարման համար նախնական պատվերների կատարման փուլում՝ Աջափնյակ վարչական շրջանի կողմից արձանագրվել է, որ մատակարարված հացը չի համապատասխանել տեխնիկական-բնութագրի պահանջներին: Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ Երևանի քաղաքապետարանի կողմից 07.11.2018թ., 09.11.2018թ. և 13.11.2018թ, մատակարարումները չիրականացնելու արդյունքում արդեն իսկ պետք է լուծվեր պայմանագիրը պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի հիմքով: Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ անհիմն է պատվիրատուի կողմից մատակարարված ապրանքի անպատշաճ որակի լինելու փաստի արձանագրումը, քանզի անհասկանալի է, թե ինչ եղանակներով և ինչ փորձագիտական կենտրոնում է կատարվել հետազոտությունը:

Բողոքներ քննող անձի այն հարցին, թե ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել պարզելու հացի անպատշաճ որակի լինելու փաստը, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ հացի որակի ոչ պատշաճ լինելը ընդամենը անզեն աչքով է տեսանելի եղել: Իսկ այն հարցին, թե ի՞նչու Ընկերությանը ապրանքի փոխարինման ողջամիտ ժամկետ չի տրվել և թե ո՞ր մեքենայի, և ո՞ր առաքիչի սանիտարական անձնագիրն ու գրքույկն էր բացակայում, Պատվիրատուի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձի հնչեցրած հարցին որևէ պատասխան չտվեց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Երևանի քաղաքապետարանի և «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի միջև 28.11.2018թ. կնքվել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/1-8 ծածկագրով գնման պայմանագիր:
- ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/1-8 ծածկագրով գնման պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվել է հացի մատակարարումը:
- ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/1-8 ծածկագրով գնման պայմանագրի տեխնիկական բնութագրով ժամկետ է սահմանվել՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո մինչև 2018թ. դեկտեմբեր ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ:
- «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն 07.11.2018թ. տեխնիկական խնդիրների պատճառով չի իրականացրել հացաթխման աշխատանքներ, ինչի մասին տեղյակ է պահել պատվիրատուներին:
- Աջափնյակ վարչական շրջանի կողմից 09.11.2018թ. «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն ստացել է զանգ, առ այն, որ հրաժարվում են հացի մատակարարումից:
- Աջափնյակ վարչական շրջանի կողմից 12.11.2018թ. կրկին կատարվել է հացի մատակարարման պատվեր, այնուհետև 13.11.2018թ. արձանագրվել է, որ մատակարարված հացը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին:
- «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին ապրանքի փոխարինման ողջամիտ ժամկետ չի տրվել:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ.

1. Մատակարարված հացի անպատշաճ որակի լինելու փաստի արձանագրումն անհիմն է, քանի որ առկա չէ դրա վերաբերյալ որևէ վերաբերելի ապացույց կամ համապատասխան եզրակացություն:

2. Պատվիրատուի կողմից չներկայացվեց որևէ ապացույց այն մասին, թե որ մեքենայի և որ առաքիչի սանիտարական անձնագիրն ու գրքույկն է բացակայում, հետևաբար արձանագրված տվյալ անհամապատասխանությունը ևս անհիմն է:

3. Հացի մատակարարման ժամկետը երկու օրից ավել խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ուներ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ միակողմանի լուծեր կնքված պայմանագիրը, և քանի որ Պատվիրատուն տվյալ հիմքով չի լուծել Պայմանագիրը և շարունակել է ընդունել մատակարարված ապրանքը, հետևաբար

դրանից հետո մատակարաման ժամկետը երկու օրից ավելի ուշացնելու հիմքով Պայմանագիրը միակողմանի լուծելը իրավաչափ չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ արձանագրված հիմնավորումները չէին կարող հիմք հանդիսանալ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.11.2018թ. թիվ 27/26-3/21750-18 գրությամբ «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ